Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-1241-19.01.2026-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» 2021 թվականի մարտի 24-ի թիվ ՀՕ-147-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասը «դրամական պարգևատրմամբ» բառերից հետո լրացնել «, մեդալով կամ կրծքանշանով:» բառերով:

Հոդված 2. Օրենքի 45.3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մասով.

«8. Հատուկ միջոցները հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին հատկացնելու, պահելու, կրելու և հանձնելու կարգը սահմանում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ընդունումից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-1241-19.01.2026-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2021 թվականի մարտի 24-ի թիվ ՀՕ-147-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասը «դրամական պարգևատրմամբ» բառերից հետո լրացնել «, մեդալով կամ կրծքանշանով~~՝~~» բառերով:

Հոդված 2. Օրենքի 45.3-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 8-րդ մասով.

«8. Հատուկ միջոցները հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին հատկացնելու, պահելու, կրելու և հանձնելու կարգը սահմանում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ընդունումից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1241-19.01.2026-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Կառավարություն**	**Նախագծի վերնագիր, Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի վերնագրում «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) կրճատ անվանման հիշատակումից առաջարկում ենք հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը: Օրենքի	Ընդունվել է	Ընդունվել է

			կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:»: Նույն առաջարկությունը վերաբերելի է նաև Նախագծի 1-ին հոդվածում Օրենքի լրիվ անվանման մեջ նշված «Հայաստանի Հանրապետության» բառերին: Նախագծի 1-ին հոդվածում «կրծքանշանով» բառից հետո անհրաժեշտ է հանել «:» կետադրական նշանը:		
2.	**Կառավարություն**	**Նախագծի 3-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի 45.3-րդ հոդվածում լրացվող նոր՝ 8-րդ մասով նախատեսվում է, որ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին հատուկ միջոցները հատկացնելու, պահելու, կրելու և հանձնելու կարգը սահմանվում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից: Հարկ ենք համարում նշել սակայն, որ ներկայումս հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից հակակոռուպցիոն կոմիտեի	Ընդունվել է	Ընդունվել է

			ծառայողին հատուկ միջոցներ հատկացնելու, պահելու, կրելու և հանձնելու կարգի վերաբերյալ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը բացակայում է: Այս համատեքստում կարծում ենք, որ Նախագծի ընդունման դեպքում անհրաժեշտություն է առաջանալու օրենքի կիրառումը ապահովելու նպատակով ընդունել համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ: Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք Նախագծում նախատեսել անցումային դրույթ, որով կսահմանվի համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի իրավակարգավորումն առ այն որ, եթե օրենսդրական ակտով		

			(բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:		